Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին թիվ 2112704959 և 2112687946 որոշումներն անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման թողնելու մասին

<<14>> 05 2021թ. 7-13- 7881 ք.Երևան

Ճանապարհային ոստիկանության պետ, ոստիկանության գնդապետ Ե. Կարապետյանս, վերանայելով Գայանե Տիգրանյանի ՄԴ/38663-21 դիմումի քննարկման արդյունքում ստեղծված նյութերը՝

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Դեմիրճյան փողոցի 33 շենքի 60 բնակարանի բնակիչ Գայանե Տիգրանյանը դիմումով խնդրել է բեկանել Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին թիվ 2112704959 և 2112687946 որոշումները՝ հայտնելով անհամաձայնություն կայացված որոշումների կապակցությամբ:

Դիմումի քննարկման արդյունքում պարզվել է, որ վարչական բողոքը ենթակա է մերժման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

<<Տեսանկարահանող և լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին>> օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական վարույթի իրավախախտման հատկանիշների պարզման փուլում իրավախախտումը հիմնավորող ապացույցը իրավախախտումն ամրագրած **տեսանյութն է կամ լուսանկարը,** որը պարունակում է նաև տեխնիկական միջոցով արձանագրված տվյալները: Ըստ նույն հոդվածի 2-րդ մասի՝ որպես իրավախախտումը հիմնավորող ապացույց վարչական կամ դատական կարգով բողոքարկման վարույթում կարող են օգտագործվել Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 251-րդ հոդվածով նախատեսված ապացույցները:

ՀՀ կառավարության <<Ճանապարհային երթևեկության կանոնները և տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող անսարքությունների ու պայմանների ցանկը հաստատելու մասին>> 28.06.2007թ. թիվ 955-Ն որոշման 7-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ դեղին ազդանշանն արգելում է երթևեկությունը (բացառությամբ կանոնների 19-րդ կետով նախատեսված դեպքի) և նախազգուշացնում ազդանշանի առաջիկա փոփոխման մասին, իսկ նույն որոշման 7-րդ կետի 5-րդ ենթակետի, լուսացույցի կարմիր ազդանշանն, այդ թվում նաև՝ թարթող, արգելում է երթևեկությունը: Նույն որոշման 18-րդ կետի համաձայն՝ լուսացույցի (բացի դարձափոխայինից) կամ կարգավորողի արգելող ազդանշանի դեպքում վարորդը պետք է կանգ առնի «Կանգ-գիծ» գծանշման (կամ 6.16՝ «Կանգ-գիծ» նշանի) առջև, իսկ դրա բացակայության դեպքում՝ հատվող երթևեկելի մասի առջև՝ հաշվի առնելով կանոնների 93-րդ կետը, խոչընդոտ չստեղծելով հետիոտների համար, ինչպես նաև այլ վայրերում՝ լուսացույցի կամ կարգավորողի առջև՝ խոչընդոտ չստեղծելով թույլատրելի ուղղություններով երթևեկող տրանսպորտային միջոցների և հետիոտների համար:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124.3 հոդվածի 1-ին մասի համաձայն տրանսպորտային միջոցների վարորդների կողմից լուսացույցի կամ կարգավորողի արգելող ազդանշանին չենթարկվելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանհինգապատիկի չափով, տուգանային միավորի կիրառում՝ 2 միավոր:

Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին թիվ 2112704959 որոշման ուսումնասիրությամբ ակնհայտ է դառնում այն փաստը, որ 26.04.2021թ. ժամը 08:38-ին Երևան քաղաքի Փափազյան – Էմին փողոցների խաչմերուկի հատվածում՝ իրավախախտումն արձանագրած վայրում առկա է <<Կանգ-գիծ>> գծանշումը, որը եղել է մասամբ մաշված, սակայն տեսանելի է երթևեկության մասնակիցներին և դիմումատուի կողմից այն հատելու պահին միացված է եղել **լուսացույցի կարմիր ազդանշանը**:

Այսպես՝ տեսանյութի 08:38:26-րդ վայրկյանին միանում է լուսացույցի դեղին ազդանշանը, իսկ 08:38:29-րդ վայրկյանին՝ միանում է լուսացույցի կարմիր ազդանշանը, երբ դիմումատուի տրանսպորտային միջոցը գտնվում էր <<Կանգ-գիծ>> գծանշման առջև: Դիմումատուի տրանսպորտային միջոցը <<Կանգ-գիծ>> գծանշումը հատում է տեսանյութի 08:38:31-րդ վայրկյանին, երբ շարունակվում էր միացված մնալ լուսացույցի կարմիր ազդանշանը:

ՀՀ կառավարության <<Ճանապարհային երթևեկության կանոնները և տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող անսարքությունների ու պայմանների ցանկը սահմանելու մասին>> 28.06.2007թ. թիվ 955-Ն որոշման 52-րդ կետի համաձայն՝ երկկողմ երթևեկությամբ ճանապարհներին գծանշման բացակայության դեպքում հանդիպակաց երթևեկության կողմ է համարվում երթևեկելի մասի լայնության ձախ կեսը՝ չհաշված երթևեկելի մասի լայնացումները (թափառքի եւ արգելակման գոտիներ, ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների կանգառի համար լայնացված տեղեր եւ այլն):

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 18-րդ մասի համաձայն տրանսպորտային միջոցների վարորդների կողմից հանդիպակաց երթևեկության գոտի դուրս գալը, եթե դա կապված չէ վազանցը թույլատրված տեղերում վազանց կատարելու կամ կանգնած տրանսպորտային միջոցը կամ խոչընդոտը շրջանցելու հետ, և եթե առանց հանդիպակաց երթևեկության գոտի դուրս գալու անհնար է շրջանցել կանգնած տրանսպորտային միջոցը կամ խոչընդոտը առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանհինգապատիկի չափով, տուգանային միավորի կիրառում՝ 3 միավոր:

Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին թիվ 2112687946 որոշման ուսումնասիրությամբ պարզվել է, որ դիմումատուի կողմից վարած տրանսպորտային միջոցը 22.04.2021թ. Ժամը՝ 13:05-ին Երևան քաղաքի Թամանյան - Իսահակյան փողոցների խաչմերուկի հատվածում դուրս է եկել հանդիպակաց երթևեկելի գոտի, որը կապված չէ վազանցը թույլատրված տեղերում վազանց կատարելու հետ:

ՀՀ կառավարության <<Ճանապարհային երթևեկության կանոնները և տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող անսարքությունների ու պայմանների ցանկը սահմանելու մասին>> 28.06.2007թ. թիվ 955-Ն որոշման 77-րդ կետի 1-ին, 2-րդ և 8-րդ ենթակետերի համաձայն՝ վազանց արգելվում է՝ խաչմերուկներում, հետիոտնային անցումների վրա, վերելքի վերջում և ճանապարհի սահմանափակ տեսանելիությամբ հատվածներում, երբ վազանցը կատարվում է հանդիպակաց երթևեկության գոտի դուրս գալով:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 9-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտում (զանցանք) է համարվում պետական կամ հասարակական կարգի, սոցիալիստական սեփականության, քաղաքացիների իրավունքների և ազատությունների, կառավարման սահմանված կարգի դեմ ոտնձգվող հակաիրավական, մեղավոր **(դիտավորյալ կամ անզգույշ)** այնպիսի գործողությունը կամ անգործությունը, որի համար օրենսդրությամբ նախատեսված է վարչական պատասխանատվություն:

Այսպիսով, հիմնավորվել է, որ վարչական տույժ նշանակելու մասին վերը նշված որոշումներն օրինական են և իրավաչափ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 293-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 2112704959 և 2112687946 որոշումները թողնել անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հանձնելու օրվան հաջորդող օրը և կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:
3. Սույն որոշման օրինակն ուղարկել Գայանե Տիգրանյանին:

Ե. Կարապետյան

Կատարող՝ Ա.Գալստյան
Հեռ. 060 83-84-02